Հավելված 11
ՀՀ ֆինանսների նախարարի << 02 >> օգոստոսի 2013թ.
թիվ 667-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ը, որը գտնվում է ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀԷԵԲՊՆ-ՇՀԱՊՁԲ-15/7-Ջ-3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի արդյունքում 2017թ-ի մարտի 24-ին կնքված պայմանագրում 2017թ-ի ապրիլի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: Ապրանքների մատակարարման ժամկետի փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Գնման ժամանկացույցով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:

Փոփոխության հիմնավորում: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.01.2015թ N105-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 60-րդ կետի 4-րդ ենթակետը, ԱՁ Գրիգոր Այվազյանի կողմից ներկայացված գրություն N 014 առ 28.04.2017թ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Նիկոլայանին:

Հեռախոս՝ 012 74 00 77:

Էլ. փոստ՝ sevan_hr.gnumn@mail.ru :

Պատվիրատու՝ ***ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1
24.03.2017թ ԿՆՔՎԱԾ N: ՀՀԷԵԲՊՆ-ՇՀԱՊՁԲ-15/7-Ջ-3-01 ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» « ապրիլ » 2017 թ.

«Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Կ. Եփրեմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և անհատ ձեռնարկատեր Գրիգոր Այվազյանը այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 24.03.2017թ կնքված ՀՀԷԵԲՊՆ-ՇՀԱՊՁԲ-15/7-Ջ-3-01 շինանյութերի մատակարարման գնման պետական պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 9.4 և 9.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի N 2 հավելվածով՝ Գնման ժամանակացույցով նախատեսված շինանյութ /այսուհետ՝ Ապրանք/ ապրանքի մատակարարման ժամկետը երկարձգել 30 օրացուցային օրով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Ջրառ» ՓԲԸ	Ա/Ձ Գրիգոր Այվազյան
ՀՀ ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա	Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Արցախ» մ/ճ	«Ինեկոբանկ» ՓԲԸ «Արտաշատ» մ/ճ
h/h 11500846892400, ՀՎՀՀ 00093621	h/h 2051532055341001, ՀՎՀՀ 84485538
Տնօրենի պաշտոնակատար	
Կ. ԵՓՐԵՄՅԱՆ	Գ. ԱՅՎԱԶՅԱՆ
Կ. S.	Կ. S.